Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2802-10

# ԾՐԱԳԻՐ

# ԽՍՀՄ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

## ԹԵՄԱ I. ԽՍՀՄ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

### *ԱՆՑՈՂԻԿ ՇՐՋԱՆԻ ԷՅՈՒԹՅՈՒՆԸ:*

*Կապիտալիզմից կոմունիզմի անցնելու շրջանը վորպես փոխանցվելու հեղափոխական ձեւափոխման շրջան:*

*Պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրան, վորպես այդ ձեւափոխման հիմք: Մարքսը, Էնգելսը, Լենինը սոցիալիզմին անցնելու շրջանի, սոցիալիզմի և կոմունիզմի մասին: Մանր արտադրության սոցիալիստական վերակառուցումը և սոցիալիզմի հիմքի կառուցումը վորպես անցողիկ շրջանի հիմնական խնդիր: Անցողիկ շրջանի և սոցիալիզմի մասին II Ինտերնացիոնալի առնչված տեսությունների քննադատությունը: Կոմինտերնը ինդուստրիայի բարձր և ցածր զարգացման հասած յերկրների անցողիկ շրջանի մասին:*

## ԽՍՀՄ-Ի ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*ԽՍՀՄ-ի տնտեսության հինգ կառուցվածքը, նրանց էյությունը, փոխադարձ կապն ու դինամիկան: Սոցիալիստական սեկտորի, իբրև բարձունքների, սոցիալիստական արդյունաբերության, մանավանդ ծանր ինդուստրիայի ղեկավար դերը: Պետական ձեռնարկությունները վորպես հետեվողականորեն սոցիալիստական տիպի ձեռնարկություններ: Պետձեռնարկությունների տրոցկիստական-զինովյեվական մեկնաբանությունն, իբրև պետական-կապիտալիստական ձեռնարկությունների, այդ մեկնաբանության սոցիալ-դեմոկրատական էյությունը:*

*Կոոպերացիան, կոլտնտեսությունը վորպես տնտեսության սոցիալիստական ձևեր: Արտադրության պետական-սոցիալիստական և կոոպերատիվ սոցիալիստական ձևերի նմանությունն ու տարբերությունը: Պետկապիտալիզմի լենինյան ըմբռնումը: Խորհրդային տնտեսության տրոցկիստական-մենշեվիկյան մեկնաբանության քննադատությունը, իբրև պետկապիտալիստական տնտեսության: Պետկապիտալիստական կառուցվածքի դերը ԽՍՀՄ-ում:*

*Նախակապիտալիստական ձևերը ԽՍՀՄ-ի տնտեսության մեջ, նրանց տարբերությունը կապիտալիստական ձևերից: Մանր ապրանքային տնտեսությունը (գյուղացիության հիմնական մասսան) իբրև կապիտալիզմի տարերային աճման հիմք:*

*Մանր ապրանքային արտադրողի վիճակն ու հեռանկարները կապիտալիզմի պայմաններում և ԽՍՀՄ-ում: Մանր ապրանք արտադրողի զարգացման*

18.02.2014 32.182

յերկու տենդենցները պրոլետարական դիկտատուրայի պայմաններում: Կռիվ տարերային-կապիտալիստական տենդենցի դեմ, գյուղի պլանային սոցիալիստական ձևափոխման համար՝ պրոլետարիատի ղեկավարությամբ: Սոցիալիստական ինդուստրիայի ղեկավար դերը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Լենինի կոոպերատիվ պլանն ու նրա խեղաթյուրումը տրոցկիստների և աջ ուկլոնիստների կողմից: «Մ՞վ, ո՞ւմ» պրոբլեմը անցողիկ շրջանի զանազան էտապներում: «Զոդման» պրոբլեմն ու նրա ձևերը:

Կապիտալիստական սեկտորը, նրա ձևերն ու դերը: Ինչո՞ւ յե թույլ տրվում կապիտալիստական սեկտորը: Կապիտալիստական սեկտորի դեմ կռվելու բնույթն ու յեղանակները. օգտագործելը, սահմանափակելը և դուրս մղելն առաջին էտապում, նրա լիակատար լիկվիդացիային անցնելը Նեպի ներկայի նոր էտապում: Անցողիկ շրջանի ընթացքում պրոլետարական պետության տնտեսական քաղաքականության ազդեցությամբ տնտեսական կառուցվածքների փոխհարաբերության մեջ՝ սոցիալիզմի օգտին տեղի ունեցող փոփոխությունը:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հասարակական աշխատանքի համեմատական բաշխումը: Բուխարինի «աշխատանքային վատնումների օրենքի», Պրեոբրաժենսկու յերկու կարգավորիչների տեսության, Սոկոլնիկովի և Սմիլգայի արժեքի օրենքի, վորպես խորհրդային տնտեսության կարգավորիչի, քննադատությունը:

Պլանն ու տարերայնությունը խորհրդային տնտեսության մեջ: Անցողիկ տնտեսության «կարգավորիչի» պրոբլեմը:

Բաշխման պրոբլեմը ԽՍՀՄ-ի տնտեսության մեջ: Տնտեսական քաղաքականության և դասակարգային կռվի դերը յեկամտի բաշխման ժամանակ: Բաշխման բնագավառում տրոցկիստների, աջերի և բուրժուական տնտեսագետների տեսությունների և գործնական առաջարկությունների վերլուծությունը:

Խորհրդային տնտեսության սոցիալիստական սեկտորի նկատմամբ՝ հավելյալ արժեքի, աշխատավարձի, շահի և տոկոսի կատեգորիաների անգործադրելիությունը:

Ժողովրդական յեկամտի բաշխման դինամիկան ԽՍՀՄ-ում, ըստ սեկտորների: Բանվոր դասակարգի բաժինը: Քաղաքը և գյուղը: Վարկը, բյուջեն, գներն իբրև ժողովրդական յեկամտի վերաբաշխման գործոններ: Վերարտադրության և «ճգնաժամերի» պրոբլեմը խորհրդային եկոնոմիկայում: Վերարտադրության և հասարակական աշխատանքի համեմատական բաշխման պրոբլեմը: Հավասարակշռության մեքենայական տեսության քննադատությունը (Բուխարին և ուրիշները):

Վերարտադրության տեմպի պրոբլեմը: ԽՍՀՄ-ի տնտեսության զարգացման արագ տեմպի աղբյուրները: Կուտակում և սպառում: ԽՍՀՄ-ի տնտեսության զարգացման տեմպի հարցում տրոցկիստների և աջերի ունեցած դիրքավորման քննադատությունը: Բուրժուական տնտեսագետների քննադատությունը:

Կապիտալիստական տիպի ճգնաժամերի չգոյությունը ԽՍՀՄ-ում: «Ճգնաժամերի» պրոբլեմն ու տնտեսական դժվարությունները ԽՍՀՄ-ի եկոնոմի-



22248-59 (7689-53)

կայում: Օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների դերը տնտեսական դժվարություններում: Անհամեմատականությունների (դիսպրոպորցիաների) և նեղ տեղերի վերացման պրոբլեմը:

Աջերի, տրոցկիստների և աջ-«ձախ» բլոկի սխալները՝ տնտեսական դժվարությունների և նրանց վերացման միջոցների գնահատման հետ կապված հարցերում:

Պլանավորման սիստեմն ու մեթոդները: Պլանավորման նախադրյալները— պրոլետարիատի դիկտատուրան և իշխող տնտեսական բարձունքները: Պլանավորման անհնարինությունը կապիտալիզմի ժամանակ (ի թիվս դրա նաև մոնոպոլիստական կապիտալիզմի սիստեմում): «Կազմակերպված կապիտալիզմի» տեսության քննադատությունը (ս.-դ., Բուխարին):

Պլանավորման մեթոդներն ու ձևերը: Օպերատիվ պլան, վերահսկիչ թվեր, հնգամյակ և գլխավոր պլան:

Ռայոնացման պրոբլեմը: Պլանը և ձեռնարկությունը: Պլանը և արհմիությունը:

Սոցիալիստական շինարարության ժամանակակից փուլն ու պլանավորումը: Պլանավորման բազայի աճումը՝ գյուղում տեղի ունեցող սոցիալիստական սեկտորի աճման, համատարած կոլեկտիվացման անցնելու հետևանքով, պլանն ստորադաս արտադրական միավորների հասցնելը, պլանն օպերատիվ առաջադրությանը մոտեցնելը:

## ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Կապիտալիստական զարգացման անհամաչափության օրենքը: Այդ զարգացման առանձնահատկությունները իմպերիալիզմի դարաշրջանում և մեկ յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության հարցը: Այդ հաղթանակի պայմանները: ԽՍՀՄ-ում սոցիալիզմի վերջնական հաղթանակի պրոբլեմը: Սոցիալիզմի շինարարությունը ԽՍՀՄ-ում և համաշխարհային հեղափոխությունը: Պրոլետարիատի դաշինքը գյուղացիության հիմնական մասսաների հետ՝ բանվոր դասակարգի ղեկավարությամբ, վորպես սոցիալիզմի կառուցման անհրաժեշտ պայման: Ինդուստրացման արագ տեմպերի նշանակությունը սոցիալիզմի կառուցման համար: Սոցիալիստական արդյունաբերության ղեկավար դերը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մեջ: Լենինյան կոոպերատիվ պլանը: Նեպը, վորպես սոցիալիզմի հիմքի կառուցման քաղաքականություն: Սոցիալիստական շինարարության ժամանակակից էտապը: Սոցիալիստական շինարարությունն ու սոցիալիզմի ծավալուն հարձակումը կապիտալիստական տարրերի դեմ՝ ամբողջ ճակատի վրա: Դասակարգային կռիվը սոցիալիստական շինարարության զանազան էտապներում: Այդ տեսության սոցիալ դեմոկրատական էությունը, վորը բխում է ԽՍՀՄ-ում պրոլետարիատի հեգեմոնիայի, զոդման մասին Լենինի ունեցած ուսմունքի, լենինյան կոոպերատիվ պլանի ժխտումից: Գյուղացիության վերաբերյալ տրոցկիստական մենշևիկյան հայացքների սխալ լինելը:

Աջ օպորտունիստների սխալները սոցիալիզմի շինարարության ուղիների հարցերի վերաբերյալ: «Սոցիալիզմի խաղաղ ներաճման» տեսության քննադատությունը: Լենինի կոոպերատիվ պլանի խեղաթյուրումը աջ ոպոզիցիայի կողմից. արտադրական կոոպերացման (կոլեկտիվացման) թերագնահատումը, դասակարգային կռվի կոծկումը, ինդուստրացման դերի և նրա արագ

տեմպերի անհրաժեշտության թերագնահատումը: Գյուղատնտեսության հիմնական մասսաների հետ ունեցած դաշինքի ժամանակ պրոլետարիատի ղեկավար դերի թերագնահատումը: «Զիջումների տեսության» քննադատությունը: Աջ ուկլոնիստների գիծը և գործնականում նրա հարելը տրոցկիստական այն թերահավատությանը, թե չի կարելի ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցել: Աջ թեքումը իբրև գլխավոր վտանգ տվյալ էտապում: Աջ օպորտունիստական հայացքների սոցիալական արմատները և նրանց նմանությունը բուրժուական իդեոլոգների դիրքավորումների հետ:

Կոնդրատյեվշչինան և գրոմանովշչինան: Նրանց հակահեղափոխական էությունը: ԽՍՀՄ-ում կապիտալիզմի վերականգնման նրանց ծրագիրը: Արդյունաբերության մեջ, տրանսպորտում, պլանավորման գործում և այլն լեգած վնասարարության քաղաքական ղեկավարությունը: Խորհրդային էկոնոմիկայի և նրա զարգացման ուղիների բնույթի բուրժուական գնահատումը: Գրոմանովշչինայի և կոնդրատևովշչինայի հիմնական դիրքավորումները. գենետիկ պլանավորման ժխտումը, պլանավորումը շուկայական օրինաչափությունների «նախատեսում» համարելը, ինդուստրացման տեմպերի խոր-տագույն փոքրացում, ԽՍՀՄ-ի տնտեսության առավելությունների ժխտում, ինդուստրացման ծրագրի վիժեցում և «Հանգույց կորակիծը»: Կոնցեսիաների մասնավոր արդյունաբերության, մասնավոր-կապիտալիստական կուտակման ծավալման վրա հույս դնելը, արտաքին առևտրի մոնոպոլիան վերացնելը, առևտրի, «նորմալ շուկայի» ազատություն տալը: Ապրանքաշրջանառության պլանավորման հնարավորության ժխտումը: Ֆինանսների բուրժուական սխեմ թողնելը: Խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության էֆեկտավորության ժխտումը, կուլակի վրա հենվելը, գյուղի կապիտալիստական ուղին ընդունելը: Կոնդրատևովշչինայի և գրոմանովշչինայի՝ Համ. Կ. (բ) Կ-ի ոպոզիցիայի վրա դրած հույսերը: Կոնդրատևովշչինայի և գրոմանովշչինայի հակահեղափոխական ծրագրի հարազատությունն ու նմանությունը Համ. Կ. (բ) Կ-ի ներսում լեգած կուլակային գործակալության ծրագրի—աջ թեքման և հակահեղափոխական տրոցկիզմի հետ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ЛЕНИН.—Экономика и политика в эпоху диктатуры пролетариата (XVI том).
2. ЛЕНИН.—О продналоге (XVIII том).
3. СТАЛИН.—Доклад и заключительное слово на XVI с'езде ВКП(б).
4. ТАЛЬ.—Строительство социализма в СССР.
5. «Кондратьевщина»—сборник, изданный Комакадемией.
6. «В помощь партучебе».—Серия по экономполитике, выпуск 1-й экономика переходного периода.


---

## ԹԵՄԱ II. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՏԱՊՆԵՐԸ

Կուսակցության տնտեսական ծրագիրը մինչև Հոկտեմբեր. 1917 թ. ապրիլի 4-ի Լենինի թեզիսները և կուսակցության VI համագումարի վորոշումները: Տնտեսական քաղաքականության առաջին շրջանը (1917 թ. Հոկտեմ-



բեր—1918 թ. մեջերքը): Սոցիալիզմի շինարարության լենինյան պլանը, առաջադրված 1918 թվին:

Ռազմական կոմունիզմի սիստեմը: Պրոլետարիատի և գյուղացիության ռազմա-քաղաքական դաշինքը վորպես պրոլետարական դիկտատուրայի հիմք ռազմական կոմունիզմի շրջանում:

Ռազմական կոմունիզմի դասերը. ռազմական կոմունիզմը—կատարած «սխալը» (Լենին). ռազմական կոմունիզմ—մատուցած «ծառայությունը» (Լենին): Ռազմական կոմունիզմի շրջանի պատմական նշանակությունը:

Քաղաքացիական պատերազմի և ռազմական կոմունիզմի քաղաքականության տնտեսական և քաղաքական հետևանքները: Պրոլետարիատի և գյուղացիության մասսաների միջև դաշինքի ամրացման անհրաժեշտությունը՝ տնտեսական հիման վրա:

Նեպին անցնելը:

Նեպը վորպես պրոլետարիատի միակ ճիշտ տնտեսական քաղաքականություն՝ անցողիկ շրջանում: Նեպի միջազգային նշանակությունը: Նեպն իբրև սոցիալիզմի հիմքի կառուցումն ապահովող քաղաքականություն: Նեպի բնորոշումը Լենինի և Ստալինի կողմից: Տնտեսության սոցիալիստական ու կապիտալիստական տարրերի միջև տեղի ունեցող կռիվը նեպի ժամանակ: Շուկայի պետական կարգավորումը նեպի ժամանակ և դրա նշանակությունը: Նեպի յերկու շրջանը: Վերականգնման շրջան: Վերականգնման պրոցեսի արագ տեմպը ԽՍՀՄ-ում: Արդյունաբերության, գյուղական տնտեսության և տրանսպորտի վերականգնումը, դրամական շրջանառության, վարկի, ապրանքաշրջանառության կազմակերպումը: Կռիվ գերինդուստրիալիզմի և տրոցկիստների հակամիջակային գծի դեմ: Անցում դեպի վերակառուցողական շրջանը: Վերակառուցողական շրջանի խնդիրները. ժողովրդական տնտեսության տեխնիկական և սոցիալական վերակառուցումը, մանր արտադրության սոցիալիստական վերակառուցումը, կապիտալիզմը արմատախիլ անելը: Ինդուստրացման հաջողությունները վերակառուցողական շրջանի առաջին տարիներին, վորպես կապիտալիզմը արմատախիլ անելու բազա: «Ո՞վ, ո՞ւմ» նոր հարցադրումը (պայքար նոր տեխնիկայի հիման վրա արտադրությունը հանրայնացնելու համար): Զոդման նոր արտադրական ձևերը: Դասակարգային կռվի խիստ սրումը վերակառուցողական շրջանում: Ինդուստրացման և գյուղատնտեսության հանրայնացման արագ տեմպերի վճռական իրագործումը վորպես քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերի վրա սոցիալիստական հարձակում կատարելու արտահայտություն:

Նեպի յերկվությունը: Նեպը միմիայն իբրև նահանջ մեկնաբանելու սխալ լինելը: Նեպն իբրև նահանջ մեկնաբանելու վերաբերյալ աջ ուկլոնիստների ու տրոցկիստների դիրքավորումների նույնությունը: Նեպն իբրև նահանջ մեկնաբանելու կապը՝ մեկ յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության թեորիայի հետ: Քննադատությունն այն աջ օպորտունիստական տեսությունների, վորոնք նեպի էությունը համարում են առևտրի ազատությունը, թերագնահատում են միջակի յերկակի բնույթը, գյուղացիության միջակ մասսաների հետ բանվոր դասակարգի ունեցած դաշինքի էությունը և այդ դաշինքում բանվոր դասակարգի ունեցած ղեկավար դերի անհրաժեշտությունը: «Ինքնահոսի» և սեկտորների «հավասարակշռության» թեորիաների քննադատությունը: Լենինյան դիրքավորման ժխտումը «ո՞վ, ո՞ւմ» հարցում: «Ո՞վ, ո՞ւմ»: «Դասակարգային կռվի մեղմացման տեսությունը և

նրա առանձնահատուկ վտանգը վերակառուցման շրջանի դասակարգային կռվի փաստական սրման պայմաններում: Աջերի բռնած ուղղությունն ապրանքաշրջանառության նորմալացման, կուլակային տնտեսության արտադրական ուժերին ազատություն տալու վերաբերյալ, որը բխում է Նեպի լիբերալ մեկնաբանությունից: «Նեղ տեղերին հավասարվելու» աջ օպորտունիստական տեսության քննադատությունը:

## ՆԵՊԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԷՏԱՊԸ

XVI համագումարը նոր էտապի մասին: Ժամանակակից էտապի հիմնական բնութագիրը, որպես ամբողջ ճակատի վրա սոցիալիզմի կատարած ծավալուն հարձակման էտապի: Սոցիալիզմի ծավալուն հարձակման էությունը և նրա նախադրյալները: Սոցիալիստական ինդուստրիայի, խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների և կոոպերացիայի աճումը. համատարած կոլեկտիվացման անցնելը և նրա հիման վրա կուլակին որպես դասակարգի լիկվիդացիայի ենթարկելը: Կուսակցության քաղաքականության դերը այդ ծավալուն հարձակման պատրաստության գործում: Վճռական հարձակում կապիտալիստական տարրերի վրա: Միջակի դեպի սոցիալիզմը շրջադարձի պատմական նշանակությունը և կոլխոզնիկի՝ պրոլետարիատի դիկտատուրայի հենարան դառնալը: Ինչ նոր փոփոխություն է տեղի ունեցել դասակարգերի և տնտեսական կառուցվածքների փոխհարաբերությունների մեջ: Սոցիալիստական սեկտորի՝ ղեկավար դերից գերիշխողի փոխվելը: Պլանայնության դերի հսկայական աճումը:

Ժամանակակից էտապը, դժվարությունները ու դասակարգային կռիվը

Սոցիալիզմի ծավալուն հարձակման հեռանկարները: Ժամանակակից էտապն իբրև սոցիալիզմի հիմք ստեղծող Նեպի վերջին էտապ:

Խորհրդային էկոնոմիկայի կարևորագույն պրոբլեմների նոր դրվածքը տվյալ էտապում: Ժամանակակից էտապը, շուկայի հարաբերությունները և սոցիալիստական մթերա-փոխանակում:

Աջ և «ձախ» դիրքավորումները սոցիալիստական շինարարության ժամանակակից էտապի գնահատման խնդրում: Այդ գնահատումների ունեցած նմանությունը բուրժուական և սմենովեխովական իդեոլոգների հետ:

Վճռական և անհաշտ կռիվ յերկու ճակատում—մանր բուրժուական ռադիկալիզմ հանդիսացող «ձախերի» և մանր բուրժուական լիբերալիզմ հանդիսացող ու տվյալ էտապում գլխավոր վտանգ համարվող աջերի դեմ, որպես հաղթական սոցիալիստական հարձակման և դժվարությունները հաղթահարելու հիմնական պայման: Աջ-«ձախ» բլոկը: Յերկերեսանիությունն ամեն տեսակի օպորտունիստների կողմից, որպես կուսակցության դեմ կռվելու նոր յեղանակ:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ЛЕНИН.—О продналоге: 4-летняя годовщина, о значении золота, речь и заключительное слово на Московско-губернской партконференции в 1921 г. (XVIII том).
2. СТАЛИН.—Доклад на XVI с'езде.
3. СТАЛИН.—О правом уклоне в ВКП (б).



4. ЛЕОНТЬЕВ.—Экономическая теория правого уклона.
5. СЕГАЛЬ и ТАЛЬ.—Экономполитика советской власти, главы 2, 3, 4, 5.
6. «В помощь партучебе».—Серия экономполитики, вып. 2 и 3, экономполитика до «НЭП» и «НЭП».

## ԹԵՄԱ III. ԽՍՀՄ-Ի ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԻԾՆ Է.

Ինդուստրացման էությունն ու նրա նշանակությունը սոցիալիստական շինարարության գործում: Արտադրության միջոցների արտադրության զարգացումը: Պետարդյունաբերության տեսակարար կշռի և ղեկավար դերի բարձրացումը:

Ինդուստրացման նշանակությունը՝ կապիտալիստական աշխարհից ԽՍՀՄ-ի ունեցած անկախությունն ուժեղացնելու և պաշտպանունակությունը բարձրացնելու համար:

Ինդուստրացումը իբրև չքավոր ու միջակ գյուղացիության հետ պրոլետարիատի ունեցած դաշինքի հիմք: Ինդուստրացումն իբրև գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, համատարած կոլեկտիվացման և թշնամի դասակարգերի վերացման հիմք:

Գյուղատնտեսության ինդուստրացումը որպես խորհրդային յերկրի ինդուստրացման անբաժան մաս: Գյուղատնտեսության զարգացման նշանակությունը ինդուստրացման համար:

Սոցիալիստական և կապիտալիստական ինդուստրացում:

ԽՍՀՄ-ի ինդուստրացման լարված-արագ տեմպերի անհրաժեշտությունը պայմանավորող պատճառները:

ԽՍՀՄ-ի էկոնոմիկայի բնույթը, որն ապահովում է այդ տեմպերի իրական լինելը:

ԽՍՀՄ-ի էկոնոմիկայի առավելությունները: Պլանայնություն, բանկերի հսկայական կենտրոնացում, ժողովրդա-տնտեսական և ոչ թե մասնավոր-տնտեսական «նեղ-առևտրական» սկզբունք տնտեսավարության մեջ: Բանվորական միլիոնավոր մասսաների և բոլոր աշխատավորների լայն մասնակցությունը արտադրության կազմակերպման մեջ (արտադրական նախաձեռնություն, սոցիալիստական մրցում, հարվածայնություն): Արտադրական ուժերը քայքայող ճգնաժամերի չգոյություն: Բնակչության յեկամտի անընդհատ արագ աճումը, որպես նրա բարձր գնողունակության հիմք: Բացարձակ ռենտայի չգոյություն: Պարազիտային սպառման խիստ կրճատում (կալվածատերեր, կապիտալիստներ): Բացակայում է յենթարկվածությունն օտարյերկրյա կապիտալի նկատմամբ (մասնավորապես պարտքերի պրոբլեմը): Տեմպերը դանդաղող գործոններ կապիտալիստական շրջափակում, պլանային սխալներ, բյուրոկրատիզմ, վնասարարություն, կուլտուրական հետամնացություն, կադրերի պակաս և կապիտալիստական տարրերի դիմադրություն:

Աջ ուկլոնիստները, տրոցկիստները և բուրժուական էկոնոմիստները ինդուստրացման վերաբերյալ՝ կուսակցության վերցրած տեմպերին հակառակ: «Գերինդուստրիալիզատոր»-տրոցկիստների ներկայիս մինիմալիստական

դերը ինդուստրացման տեմպի հարցում: Աջ ուկլոնիստների տրոցկիստների և բուրժուական խլեոցների հայացքների նույնությունը «հանգչող կորագծի» տեսության հիման վրա: ԽՍՀՄ-ի զարգացման տեմպերն ու մակարդակը, համեմատած կապիտալիստական յերկրների հետ: Հնգամյակի անցած տարիների կատարման արդյունքները: 1930-31 տնտ. տարվա հեռանկարները

## ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակավոր անհամաչափությունների անխուսափելիությունը և նրանց վերացման հնարավորությունը՝ միմիայն ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալ-տեխնիկական վերակառուցման հիման վրա: Սոցիալիստական շինարարության դժվարությունները, վորպես դժվարություններ վերակառուցողական շրջանի, վորի ընթացքում նախատեսվում է վերակառուցման յենթարկել ժողովրդական տնտեսության ամբողջ տեխնիկական բազան և սոցիալ-տնտեսական հարաբերությունները; վորպես դասակարգային կռվի դժվարություններ և աճման, վերելքի, առաջ շարժվելու դժվարություններ: Մեր դժվարությունների առանձնահատկությունները, վորպես դժվարությունների, վորոնք իրենց մեջ պարունակում են նրանց վերացնելու հնարավորություններ: ԽՍՀՄ-ում կապիտալիզմի դիմադրության և համաշխարհային կապիտալիստական շրջափակման դերը: Արտադրության միջոցների արտադրության հետամնացությունը: Մետաղի, մեքենաների, վառելիքի, ելեկտրական էներգիայի, շինանյութերի, տրանսպորտի պակասը, հետամնացությունը կադրերի բնագավառում: Սոցիալիզմի կառուցման և անհամաչափությունների վերացման խնդրի անհամատեղելիությունը «նեղ տեղերին հավասարվելու» տեսության հետ:

Կապիտալիստական տարրերի վրա ամբողջ ճակատով հարձակում կազմակերպելը, մասսաներին այդ հարձակման համար մոբիլիզացիայի յենթարկելը և կուսակցության սեփական շարքերում ոպորտունիստական տարրերին մեկուսացման յենթարկելը, վորպես դասակարգային թշնամիների դիմադրությունը ճնշելու և դժվարությունները վերացնելու միակ միջոց:

Գյուղատնտեսության չափազանց հետամնացությունը արդյունաբերությունից: Ապրանքային սովը, նրա պատճառներն ու նրա վերացման ուղիները: Թեթև արդյունաբերության և բնակչության լայն մասսաներին արդյունաբերական ապրանքներ մատակարարելու պրոբլեմը, վորպես արտադրության միջոցների արտադրումից բխող պրոբլեմ: Անհամաչափությունների և տնտեսական դժվարությունների վերացման հեռանկարները: (Հիմնական տվյալներ ըստ 1931 թ. վերահսկիչ թվերի և ըստ հնգամյակի):

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. СТАЛИН.—Доклад на XVI с'езде ВКП (б).
2. СТАЛИН.—Об индустриализации страны и правом уклоне.
3. КУЙБЫШЕВ.—Доклад на XVI с'езде.
4. ЛЕОНТЬЕВ.—В борьбе за индустриализацию.
5. Обращение ЦК ВКП (б) от 3 сентября 1930 г.
6. Контрольные цифры на 1931 г. и особый квартал октябрь—декабрь.




## ԹԵՄԱ IV. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Արդյունաբերությունը ժողովրդական տնտեսության սիստեմում և նրա ղեկավար դերը: Արդյունաբերության կառուցվածքն ըստ ճյուղերի: Ծանր և թեթև արդյունաբերությունն ինդուստրացման պրոցեսում: Արդյունաբերության տեխնիկական վերակառուցման պրոբլեմը: Արդյունաբերության աշխարհագրական բաշխման պրոբլեմը: Արդյունաբերություն և տրանսպորտ: Ինդուստրացումը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Ագրո-ինդուստրիալ կոմբինատների շինարարության պրոբլեմը: Հնգամյակի անցած տարիների կատարման արդյունքները արդյունաբերության բնագավառում: Հնգամյակը չորս տարում լրացնելու իրական լինելը: 1931 տնտեսական տարվա հեռանկարները: ԽՍՀՄ-ի ինդուստրացման բնագավառի հերթական խնդիրները. բարձրային մետաղագործական յերկրորդ բազա ստեղծելն Ուրալում: Սև և գունավոր մետաղագործության, մեքենակառուցման, ելեկտրիֆիկացիայի, քիմիացման, տրանսպորտի արագատեմպ և չտալ զարգացման խնդիրը: Վորակական ցուցանիշների պրոբլեմը: Թեթև ինդուստրիայի զարգացումն արագացնելու հնարավորությունը: XVI համագումարը յերկրի ինդուստրացման բնագավառի խնդիրների մասին:

ԽՍՀՄ-ի արդյունաբերության կազմակերպումը: Արդյունաբերության զանազան ձևերի սոցիալական բնույթը: Արդյունաբերության զանազան ձևերի տեսակարար կշռի դինամիկան և նրանց զարգացման հեռանկարները: Պետական արդյունաբերության կազմակերպչական կառուցվածքը: Պետարդյունաբերության կազմակերպչական ձևերը քաղաքացիական պատերազմի և նեպի «վերակառուցման շրջանում»: Սոցիալիստական վերակառուցումը և արդյունաբերության կազմակերպչական ձևերի վերափոխումը: Արդյունաբերության ժամանակակից վերակազմակերպումը՝ ձեռնարկության տեխնիկական և պլանային ղեկավարությունն ուժեղացնելու հիման վրա: Ձեռնարկություն, տրեստ և միավորում: Արդյունաբերության հայթայթման կազմակերպումը: Միութենական, հանրապետական և տեղական արդյունաբերության ղեկավարման մարմինները: Շրջանային տնտեսական կոմբինատներ: Արտադրանքի սպառման կազմակերպումը:

Արդյունաբերության հիմնական փոնդերի և կապիտալ շինարարության պրոբլեմը: Արդյունաբերության կապիտալ փոնդերի կազմությունն ու նրանց դինամիկան: Արդյունաբերության կապիտալաշրջանառության պրոբլեմը: Ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի խնդիրները: Արդյունաբերության կապիտալ փոնդերի ամորտիզացիան: Արդյունաբերության ֆինանսավորման կազմակերպումը: Արդյունաբերության և պետական բյուջեյի փոխհարաբերությունը: Արդյունաբերության կարճաժամկետային և յերկարաժամկետային վարկավորումը: Վարկային ռեֆորմի նշանակությունը արդյունաբերության ֆինանսավորման համար: Արդյունաբերության ֆինանսավորում ու ներքին արդյունաբերական կուտակում: Արդյունաբերության ֆինանսավորման սիստեմը վորպես միասնական ֆինանսական պլանի մի մասը:

Ինքնարժեքի և աշխատանքի պրոբլեմը ԽՍՀՄ-ի արդյունաբերության

մեջ: Տնտեսության պլանային կարգավորումն ու արտադրության ծախսերի էությունը: Արտադրության ծախսերն ու արդյունաբերության աշխատանքի վորակական ցուցանիշները: Արդյունաբերության ռացիոնալացումն ու տեխնիկական վերակառուցումը, նոր շինարարության, ինքնարժեքի իջեցում: Կապիտալիստական և սոցիալիստական ռացիոնալացում: Արտադրանքի վորակը: Աշխատանքի արտադրողականությունը: Արտադրության ծախսերի կառուցվածքն ու դինամիկան. հումք, վառելիք և էներգիա, բանվորական ուժ, վերադիր ծախսեր: Ռացիոնալացման հարցեր, հումքի ու վառելիքի օգտագործում և վերադիր ծախսերի իջեցում: Աշխատավարձի ու աշխատանքի արտադրողականության, 7-ժամյա բանվորական օրվա, անընդհատ աշխատանքի պրոբլեմը: Սոցիալիստական մրցում և հարվածային շարժում: Արդյունաբերության համար կադրեր պատրաստելու հարցերը: Տվյալ էտապում արդյունաբերության բնագավառում արհմիությունների ունեցած խնդիրները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. СТАЛИН.—Доклад на XVI с'езде (раздел о промышленности)
2. КУЙБЫШЕВ.—Доклад на XVI с'езде.
3. Резолюция XVI с'езда по отчету ЦК, ЦКК и докладу тов. Куйбышева.
4. Обращение ЦК ВКП (б) от 3 сентября 1930 г.
5. Контрольные цифры на 1931 г. и особый квартал октябрь—декабрь.
6. «В помощь партучебе».—Серия экономполитики, вып. 4-й: политика в области промышленности.

## ԹԵՄԱ V. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Գյուղատնտեսության զարգացման հիմնական օրինաչափությունները կապիտալիզմի ժամանակ և ԽՍՀՄ-ում:

*Գյուղատնտեսության արտադրության անարխիան և շուկայի հարաբերությունների տարերայնությունը կապիտալիստական հասարակության մեջ:*

*Գյուղատնտեսության հետամնացության պատճառները կապիտալիզմի ժամանակ: Խոշոր արդյունաբերության առավելությունները գյուղատնտեսության մեջ և մանր հողագործության դրությունը: Կապիտալիստական հարաբերություններն իբրև արտադրական ուժերի զարգացման արգելակ գյուղատնտեսության մեջ՝ ԱՄՆ-ի և Գերմանիայի օրինակներով: Գյուղատնտեսական կոոպերացիան կապիտալիզմի պայմաններում:*

*Գյուղացիության դասակարգային շերտավորումը նախահեղափոխական Ռուսաստանում: Ագրարային հեղափոխության հիմնական արդյունքները: Տրոցկիստների թեզիսի քննադատությունը (XV համագումարից առաջ), թե խորհրդային գյուղը կապիտալիստական գյուղից չի տարբերվում: Գյուղատնտեսության զարգացման արդյունքները: «Դեգրադացիայի տեսությունն» ու նրա քննադատությունը: Գյուղատնտեսության զարգացման տեմպերի հետամնացության հիմնական պատճառները: Գյուղատնտեսության մեջ սոցիալիստական հիմունքներով արտադրական ուժերի զարգացման խնդիրը: Գյուղատնտեսության զարգացման յերկու ուղիները: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման նախադրյալները:*

*Դասակարգային կռիվը խորհրդային գյուղում: Պրոլետարիատի դաշինքը միջակի հետ՝ հենվելով չքավորության վրա և անհաշտ կռիվ մղելով կուլակի դեմ: Տվյալ էտապում կռվի սրման պատճառները: Անցողիկ շրջանում դասակարգային կռվի մասին տրոցկիստական և աջ թեքումների քննադատությունը: Համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու և կուլակությունը սահմանափակելու լոզունգները: Համատարած կոլեկտիվացման ու կուլակությունը վորպես դասակարգ վերացնելուն անցնելը, վորպես հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կատարած յերկրորդ և վճռական քայլ՝ սոցիալիստական հասարակություն կառուցելու գործում:*

*Ժամանակակից էտապն ու գյուղում խորհրդային իշխանության հենարանի հարցի նոր դրվածքը: Դասակարգային կռիվը կոլտնտեսության մեջ և կոլտնտեսություններից դուրս: Չքավորության կազմակերպության պրոբլեմը:*

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

*Գյուղացիության միջակ մասսաների հիմնովին կոլտնտեսության կողմը թեքվելու նախադրյալները:*

*Սոցիալիստական ինդուստրիայի ղեկավար դերը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Գյուղատնտեսական արտադրության կոոպերացումը: Լենինի կոոպերատիվ պլանը: Գյուղի կոոպերացումը աջերի մեկնաբանությամբ վորպես գյուղատնտեսական արտադրության հանրայնացում շրջանառության ասպարեզում: Կոնտրակտացիան վորպես գյուղատնտեսության կոոպերացման և հանրայնացման մեթոդներից մեկը: Մեքենա-տրակտորային կայանների, մեքենա-տրակտորային կալոնների դերը և կոոպերացիան գյուղական տնտեսությունների արտադրական կոոպերացման և հանրայնացման գործում: Խորհտնտեսությունների դերը:*

*Կոլեկտիվացման տեմպերը: Կոլեկտիվացման հաջողությունները (հանրայնացված տնտեսությունների տեսակարար կշիռը): «Ձախ» «խոտորումները» համատարած կոլեկտիվացման կիրառման ժամանակ:*

*Կոլտնտեսություններն իբրև տնտեսության սոցիալիստական տիպ: Կոլտնտեսությունների բնույթի Լենինյան գնահատականը և նրա քննադատությունը: Կոլտնտեսությունների տարբերությունը արդյունաբերության պետձեռնարկություններից և խորհտնտեսություններից, վորպես հետևողական-սոցիալիստական տիպի տնտեսությունների:*

*Կոլտնտեսությունների տիպերը՝ հողամշակման միություններ, գյուղատնտեսական արտել, կոմունա: Գյուղատնտեսական արտելը վորպես կոլտնտեսության հիմնական տիպ տվյալ էտապում: Կոլտնտեսության ստորին ձևերը ավելի բարձր ձևեր դարձնելու պրոբլեմը: Մանր-գյուղացիական տնտեսության վերարտադրության պրոբլեմը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Սոցիալիստական շինարարության նոր էտապը և «մկրատի» պրոբլեմի նոր դրվածքը:*

Խորհտնտեսությունները որպես հետևողական-սոցիալիստական տիպի ձեռնարկություններ: Խորհտնտեսությունները որպես հենակետեր կոլեկտիվացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման կիրառման գործում:

Կոնտրակտացիայի դերը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Կոնտրակտացիան և շուկայի հարաբերությունների նոր հատկությունը տվյալ էտապում:

Աշխատանքի կազմակերպման և աշխատանքի արդյունքների բաշխման պրոբլեմը: Կոլտնտեսության տերրիտորիայի կազմակերպումը: Կոլտնտեսությունների մասնագիտացման պրոբլեմը: Ապրանքայնության պրոբլեմը: Կոլտնտեսային արտադրանքի իրացումը (պետարդյունաբերության և կոոպերացիայի այլ տեսակների փոխհարաբերությունների պրոբլեմը): Անհատական սեկտորի հետ ունեցած փոխհարաբերությունների պրոբլեմը:

Աջ ուկլոնիստական և տրոցկիստական դիրքավորումների նույնությունը գյուղատնտեսության կոլեկտիվացման խնդիրներում: Սոցիալիստական ուղիով գյուղատնտեսության «ինքնահոս» զարգացման տեսությունների քննադատությունը: «Հավասարակշռության» տեսության քննադատությունը:

## ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.

Կոլեկտիվացման հետագա ծավալման խնդիրը: XVI համագումարի որոշումը գյուղատնտեսական հնգամյակի վերաքննության մասին: Համատարած կոլեկտիվացումը հնգամյակի վերջին հիմնովին ավարտելու խնդիրը: 1931 թվի վերահսկիչ թվերը: Հատիկային պրոբլեմը խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների զարգացման հիման վրա հիմնովին լուծելը: Անասնապահության և տեխնիկական կուլտուրաների պրոբլեմի լուծման անհրաժեշտության հերթական խնդիրը: Հատիկային պրոբլեմը որպես անասնապահության և տեխնիկական կուլտուրաների պրոբլեմի լուծման բանալի:

Անասնապահության պրոբլեմը: Մսի խորհտնտեսություններ ստեղծելու անհրաժեշտությունը, անասնապահական տնտեսությունը կոլտնտեսություններում զարգացնելու խնդիրը: Անասնապահական պրոբլեմի դերը արդյունաբերության համար և բանվորական մատակարարման գործում: Խոզաբուծության զարգացումը: Հնգամյակն ու 1931 թ. վերահսկիչ թվերը անասնապահության բնագավառում:

Տեխնիկական կուլտուրաների պրոբլեմը: Տեխնիկական կուլտուրաների վիճակը (քանակական ցուցանիշներ, կուլտուրաների կառուցվածքը և յուրաքանչյուրի տեսակարար կշիռը, համեմատած նախապատերազմյանի հետ). 1931 թ. վերահսկիչ թվերն ու հնգամյակը տեխնիկական կուլտուրաների բնագավառում արդյունաբերության համար: Տեխնիկական կուլտուրաների (բամբակ և այլն) ներածումը ի հաշիվ նրանց ներքին արտադրության աճման կրճատելու խնդիրը: Տեխնիկական կուլտուրաներով մասնագիտացված խորհտնտեսություններ ստեղծելու, ինչպես և կոլտնտեսություններում և անհատական տնտեսություններում ամեն կերպ տեխնիկական կուլտուրաներ զարգացնելու խնդիրը: Հատիկային և տեխնիկական կուլտուրաների գների կարգավորման մեթոդները:



Գյուղատնտեսության ռայոնացման պրոբլեմը: Հատիկային և տեխնիկական կուլտուրաները ճիշտ կերպով բաշխելու նշանակությունը՝ նկատի ունենալով կլիմայական և տնտեսական պայմանները: Գյուղատնտեսության հիմնական ռայոնները: Հնգամյակը ռայոնական տեսակետից:

Գյուղատնտեսության ինդուստրացման հասկացողությունը: Գյուղատնտեսության մեքենայացման և ագրարային գերբնակչության հարցերը: Գյուղատնտեսության ինտենսիֆիկացիայի խնդիրը: Գյուղատնտեսական ինդուստրիայի զարգացումը: Գյուղատնտեսության քիմիացումը:

Հողաշինարարության և հողօգտագործման բնագավառի վերաբերյալ խնդիրները, գյուղատնտեսական հասարակ ձեռնարկումներն ու նրանց կիրառումը: Գյուղատնտեսական աշխատանքի մեթոդները: Փորձնական հիմնարկությունների դերը: Գյուղի կադրերի պրոբլեմը:

Հնգամյակը գյուղատնտեսության բնագավառում: 1931 թ. վերահսկիչ թվերը: XVI համագումարը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մասին:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. СТАЛИН.—Доклад на XVI с'езде (раздел о с.-х.).
2. ЯКОВЛЕВ.—Доклад на XVI с'езде.
3. Резолюция XVI с'езда по отчету ЦК и докладу тов. Яковлева.
4. «В помощь партучебе».—Серия экономполитики, вып. 5-й: политика в области сельск. хозяйства.

## ԹԵՄԱ VI. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Բանվորական ուժը ԽՍՀՄ-ում: Բանվորական ուժի վերարտադրությունը: Պրոլետարիատի տեսակարար կշիռը ԽՍՀՄ-ի բնակչության կազմում: «Աշխատանքի շուկա». հասկացողության պայմանական նշանակությունը ԽՍՀՄ: Որակյալ բանվորական ուժի կադրերի և խորհրդային մասնագետների պրոբլեմը: Ֆաբզավուչ, բրիգադային աշակերտության և տեխնիկական բարձր կրթություն: Սոցիալ-կուլտուրական շինարարությունը որպես բանվորական ուժի վերարտադրության կարևորագույն պայմաններ մեր երկրում:

Բանվոր դասակարգի թվական աճումը, գործազրկության վերացումը և բանվորական կադրերի պակասը ԽՍՀՄ: Գործազրկության աճումը կապիտալիստական երկրներում: Աշխատանքի արտադրականության աճումը գյուղատնտեսական արտադրության մեջ, որպես գյուղի միլիոնավոր մասսաների ազատագրման հիմք սոցիալիստական արդյունաբերության և շինարարական աշխատանքների համար:

Բանվորական ուժի հոսունությունը, նրա պատճառները և նրա դեմ կռվելու միջոցները:

Աշխատանքի արտադրականություն և աշխատավարձ:

Աշխատանքի արտադրականության բարձրացման ուղիներն ու պայմանները: Հասարակ գործարքային օրենք: Արտադրանքի նորմաներ: Աշխա-

տանքի ռացիոնալացումը: Աշխատանքի արտադրողականության բարձրացման զանազան յեղանակները մեզ մոտ և կապիտալիստական յերկրներում: Սոցմրցում և հարվածայնության մրցումը որպես աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու մեթոդ: Սոցմրցման և հարվածայնության նոր ձևեր: Հանդիպական արդֆինպլան: 7—ժամյա բանվորական օր: Աշխատավարձի կառուցումը ԽՍՀՄ—ում: Աշխատավարձի ձևերը: Ազգային յեկամտում պրոլետարիատի ունեցած բաժինը և նրա դինամիկան: Բանվոր դասակարգի նյութական մակարդակը բարձրացնելու խնդիրները: Աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության փոխհարաբերությունը: Գների իջեցումն իբրև ռեալ աշխատավարձը բարձրացնելու հիմնական գործոններից մեկը: Աշխատավարձը պետական և մասնավոր—կապիտալիստական ձեռնարկություններում: Տարիֆային քաղաքականություն: Կոլեկտիվ պայմանագիր: Աշխատավարձը գյուղում: Տրոցկիստների դեմագոգիան աշխատավարձի հարցերում:

Սոցիալիստական ապահովագրումն ու աշխատանքի պաշտպանությունը:

Սոցիալական ապահովագրումը, նրա չափերն ու կազմակերպումը: Սոցիալական ապահովագրման դերը բանվոր դասակարգի կյանքի մակարդակը բարձրացնելու գործում: Սոցիալական ապահովագրումը որպես բանվոր դասակարգի՝ ազգային յեկամտի բաշխման գործում ունեցած կոլեկտիվ մասնակցության մի ձև: Սոցիալական ապահովագրումը որպես աշխատանքի պաշտպանության միջոց: Սոցիալական ապահովագրումը որպես գործազուրկներին օգնելու միջոց: Սոցիալական ապահովագրումը գյուղում: Աշխատանքի պաշտպանությունն ու բնակարանային շինարարությունը:

Սոցապահովագրման դրությունը կապիտալիստական յերկրներում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. СТАЛИН.—Доклад на XVI с'езде (соответствующие разделы).
2. ШВЕРНИК.—Доклад на XVI с'езде.
3. Резолюция XVI с'езда по отчету ЦК, ЦКК и докладу тов. Шверника.
4. «В помощь партучебе».—Серия экономполитики, вып. 6-ой: политика в области труда.


## ԹԵՄԱ VII. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հանրայնացված առևտուրը որպես սոցիալիստական սեկտոր մանր—ապրանքային սեկտորի հետ կապելու մի ձև: Լենինն անցողիկ շրջանի առևտրի նշանակության մասին: Առևտուրը և շաղկապը բանվոր դասակարգի և գյուղացիության միջև: Առևտրի տեսակները. պետական, կոոպերատիվ և մասնավոր: Առևտրի զանազան տեսակների փոխհարաբերության դինամիկան (քաղաքի և գյուղի ապրանքաշրջանառության վերաբերյալ): Մասնավոր առևտրի օգտագործումը նեպի առաջին շրջանում՝ ապրանքաշրջանառության զարգացման համար և միևնույն ժամանակ պետական առևտրի—կոոպերացիայի միջոցով նրա արտաքսումը: Ապրանքաշրջանառության պայմաններում մասնավոր կապիտալի դեմ կռվելու միջոցները:



Կոոպերատիվ առևտուրը: Սպառողական կոոպերացիան, նրա կազմակերպչական կառուցվածքը: Ստորին ցանցի վիճակը քաղաքում և գյուղում: Սպառողական կոոպերացիայի սոցիալական կազմը: XVI համագումարը սպառկոոպերացիայի աշխատանքում յեղած թերությունների և այլանդակությունների մասին: Ակտիվության մոբիլիզացիան սպառկոոպերացիայի աշխատանքը բարելավելու համար: Գյուղատնտեսական և արդյունաբերական կոոպերացիայի առևտրական գործունեությունը: Պետառևտուրն ու կոոպերացիան: Պետառևտրի և կոոպերացիայի դերը հայթայթման լավագույն կազմակերպման և ռեալ աշխատավարձի բարձրացման համար: Արհմիությունների խնդիրները կոոպերացիայի աշխատանքը բարելավելու բնագավառում:

Պլանային և տարերային հիմունքների պայքարը շուկայում: Շուկայի կարգավորման դժվարությունները տնտեսական անհամաչափությունների պայմաններում: Շուկան, որպես դասակարգային կռվի դրսևորման ասպարեզ (կուլակ մասնավոր):

Հացամթերումների և գյուղատնտեսական հումքի մթերումների նշանակությունը: Գների քաղաքականությունը գյուղատնտեսական մթերումների գործում: Հացամթերման ապարատը, նրա թերությունները և նրա ռացիոնալացման խնդիրները: Հացամթերումների, գյուղատնտեսական հումքի մթերումների կարգավորման հիմնական սկզբունքները: Արդյունաբերական ապրանքների պլանային փոխադրությունը: Հացի փոխադրությունը հումքային շրջանները: 1927—28, 1928—29 և 1929—30 թ. թ. հացամթերումների դասերը:

Արդյունաբերական ապրանքների շուկայի կարգավորումը, իբրև քաղաքային բնակչության հայթայթումն ապահովելու և գյուղատնտեսական ապրանքների մթերումների հաջողության անհրաժեշտ պայման: Արդյունաբերական ապրանքների ընդհանուր պայմանագրերն ու պլանային տեղափոխությունը: Խորհրդային իշխանության հիմնական գիծը արդյունաբերական ապրանքների գների քաղաքականության բնագավառում: Գների քաղաքականության բնագավառում աջ ուկլոնիստական, Տրոցկիստական և աջ—«ձախ» բլոկի ունեցած դիրքավորումների քննադատությունը:

Մեծածախ—մանրածախ միջատր: Արդյունաբերության ապրանքների ինքնարժեքի իջեցման և մանրածախ գների իջեցման խնդիրը: Արդյունաբերական ու գյուղատնտեսական ապրանքների առևտրական վերադիրը: Ապրանքառար ցանցի ռացիոնալացման խնդիրները և նրա վերադիր ծախսերի կրճատումը. այդ կրճատման ուղիները: Պետառևտրի ու կոոպերացիայի ունեցած չափի կարգավորումը: Մասսաներին գների իջեցման պայքարի մեջ քաշելու նշանակությունը:

Շուկան նեպի նոր էտապում: Շուկայի հարաբերությունների բնույթի փոփոխությունը: Մասնավոր—տնտեսական սեկտորի մեռնելու հետ միասին աստիճանաբար քաղաքի ու գյուղի միջև սոցիալիստական ապրանքափոխանակման անցնելը:

Արդյունաբերության և գյուղատնտեսության մթերքների պլանային բաշխումը: Դիֆերենցիալ մատակարարում: Մատակարարման հանրային

*տիսում: Դիֆերենցիալ գներ: Ապրանքների պակաս և դասակարգային կռիվ: Կուլակի և նեպմանի դերը առաջին անհրաժեշտության մթերքների հայթայթման դժվարություններում: Վնասարարությունը մթերափոխման հայթայթիչ ապարատներում: Բանվորներին այդ ապարատներում ղեկավար աշխատանքի մեջ առաջ քաշելը:*

*Արտաքին առևտրի մենաշնորհը և նրա նշանակությունը սոցիալիստական շինարարության համար: Լենինը արտաքին առևտրի մենաշնորհի մասին: Արտաքին և ներքին առևտրի կապը և նրանց միասնական կարգավորումը: Արտաքին առևտրի կազմակերպումը. Առևտրժողկոմատ, արտածման և ներածման ակցիոներական ընկերություններ, Պետառ, արտասահմանյան առևտրական ապարատ (առևտրական ներկայացուցչություններ): Համաշխարհային շուկայից մեր անկախությունն ուժեղացնելու գիծը և օպոզիցիայի սխալները այդ հարցում:*

*Արտաքին ապրանքաշրջանառության աճումը: Մեր տնտեսության ընդհանուր զարգացումից արտաքին առևտրի զարգացման հետամնացության պատճառները: Տնտեսության արտածման ճյուղերի զարգացման խնդիրը: Արտածման կազմակերպման թերությունները: Արտածման և ներածման մեջ տեղի ունեցող փոփոխությունը՝ կապված երկրի ինդուստրացման և մեր տնտեսական անկախության ուժեղացման խնդրի հետ: Ակտիվ հաշվեկշռի քաղաքականությունը: Կռիվ մեր արտածման դեմ բուրժուական երկրներում:*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. СТАЛИН.—Доклад на XVI с'езде (раздел о росте народного хозяйства в целом).
2. СЕГАЛЬ и ТАЛЬ.—Экономполитика (глава 9).
3. «В помощь партучебе».—Серия экономполитики, вып. 7-й: политика в области товарооборота и распределения.

## ԹԵՄԱ VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Միասնական ֆինանսական տնտեսություն և միասնական ֆինանսական պլան: Պետ բյուջեն վորպես սոցիալիստական շինարարության մի մասը և գործիքը: ԽՍՀՄ—ի պետական բյուջեն: ԽՍՀՄ—ի պետբյուջեյի յեկամտային մասի կազմությունը: Մուծումների հարկային և վոչ հարկային աղբյուրների փոխհարաբերությունը: Պետփոխառություններ: ԽՍՀՄ—ի պետբյուջեյի յեկամտային կազմությունը համեմատած ցարական Ռուսաստանի և կապիտալիստական յերկրների պետբյուջեյի հետ: ԽՍՀՄ—ի հարկային սիստեմը և նրա դասակարգային բնույթը: Յեկամտային հարկ: Գյուղատնտեսական հարկ: Հարկային արտոնություններ կոլտնտեսություններին: Ուղղակի և անուղղակի հարկերի փոխհարաբերությունը ԽՍՀՄ—ի պետբյուջեյում և յերկրի ֆինանսական պլանում: Հարկադրության ծանրությունը հեղափոխությունից առաջ և այժմ: Հարկային ծանրության բաշխումը քաղաքի և գյուղի միջև:*



*Պետբյուջեյի ծախսերի մասի կազմությունը: Վարչության, պաշտպանության, կուլտուր—սոցիալական կարիքների համար արված ծախսերի փոխհարաբերությունը և ժողովրդական տնտեսության ֆինանսավորումը:*

*ԽՍՀՄ—ի պետբյուջեյի ծախսերի մասի կազմությունը համեմատած կապիտալիստական յերկրների հետ: Տեղական բյուջեն: Նրա նշանակությունը խորհուրդների աշխուժացման քաղաքականության մեջ: Ինքնահարկում, նրա խնդիրներն ու նշանակությունը: Խորհրդային իշխանության աղգային քաղաքականության արտացոլումը ֆինպլանի կազմության մեջ:*

*Կայուն գների նշանակությունը ապրանքաշրջանառության ճիշտ գործառնության, արտադրական ուժերի զարգացման և յերկրի ինդուստրացման համար:*

*Դրամական շրջանառության սիստեմը դրամական ռեֆորմից հետո: Գանձարանային և բանկային էմիսիա: Չերվոնեցի գնողունակության կարգավորումը: Էմիսիոն քաղաքականությունը: Ապրանքային սովը և կռիվ չերվոնեցի կայունացման համար: Գների իջեցման նշանակությունը մեր չերվոնեցի կայունացումն ամրացնելու համար: Մանր փողի ճգնաժամ ու նրա պատճառները:*

*Բանկային վարկ: Վարկի ֆունկցիան ԽՍՀՄ—ի տնտեսության մեջ: Վարկի սիստեմը վորպես պլանային տնտեսության զենք: Վարկային սիստեմի կազմությունը: Վարկային ռեֆորմը: Պետբանկի նշանակությունը տնտեսության ղեկավարման համար: Տվյալներ ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյուղերը վարկավորելու մասին:*

*Պետական փոխառությունները վորպես միջոցների մոբիլիզացիայի զենք՝ ինդուստրացման համար: Պետփոխառությունների դերը ֆինպլանում: Սոցիալական զանազան խավերի մասնակցությունը պետփոխառությունների բաշխման գործում: Պետական խնայողական գանձարկղները և նրանց դերը: Խնայողական դրամարկղների մուծումներն ավելացնելու միջոցները:*

*Վարկային սիստեմը ընդհանրապես վորպես ժողովրդական տնտեսության մեջ յեղած կուտակումների վերաբաշխման և կարգավորման զենք: Վարկը վորպես սոցիալիստական տնտեսության ինդուստրացման և շինարարության լծակ:*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. СТАЛИН.—Доклад на XVI с'езде (2-й раз. доклада: цифры о гос. бюджете и финансах)
2. «В помощь партучебе».—Серия экономполитики, вып. 8-й: финансовая политика.
3. СЕГАЛЬ и ТАЛЬ.—Экономполитика (глава 10).

## ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԲՈՂՋ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ЛЕНИН.—Экономика и политика в эпоху диктатуры пролетариати (XVI том, 1-ое издание).

2. ЛЕНИН.—О продналоге (брошюра, том XVIII, часть I, 1-ое изд.).

3. ЛЕНИН.—О кооперации, о нашей революции (по поводу записок Суханова), как нам реорганизовать Рабкрин (XVIII том, 2-ая часть).

4. СТАЛИН.—Доклад и заключительное слово на XVI с'езде ВКП(б).

5. СТАЛИН.—Вопросы ленинизма (2-ое издание 1930 г.).

6. КУЙБЫШЕВ.—Доклад о выполнении 5-летнего плана промышленности на XVI с'езде ВКП (б).

7. ЯКОВЛЕВ.—Доклад о колхозном движении и под'еме сельского хозяйства на XVI с'езде ВКП (б).

8. ШВЕРНИК.—Доклад о профсоюзах на XVI с'езде ВКП (б).

9. Резолюции и постановления XVI с'езда ВКП (б).

10. Обращение ЦК ВКП (б) от 3 сентября 1930 г.

11. Экономическая политика советской власти (хрестоматия по Ленину, состовил Б. Крумин, 2-ое издание).

12. СЕГАЛЬ и ТАЛЬ.—Экономполитика советской власти (книга вышла в конце 1929 года, до поворота в партийной политике к ликвидации кулачества как класса, поэтому в целом ряде решающих установок она устарела, в силу чего использование ее в партучебе может быть весьма ограниченным).

13. Учебные статьи в журнале «В помощь партучебе» (Серия по экономполитике, изд. 1930—31 г.).



ՀՀ Ազգային գրադարան
NL0209864

32.182

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

338.98(47
Ծ -89

Գլավ. 14. Պատվեր 6098 թ. Պետհրատ 1483. Տիրաժ 3000